CONTOURGLOBAL®

Հիդրո կասկադ

Հայտարարություն մրցույթի մասին
Մրցույթի համարը 218/18
Պատվիրատուն՝ «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ն, որը գտնվում է քաղաք Գորիս, Գր. Տաթեւացու 2 հասցեում, հայտարարում է Մրցույթ:
Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար գրասենյակային կահույքի գնման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):
Ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվում 40 օր պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից: Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի մրցույթին մասնակցելու հավասար իրավունք, բացառությամբ «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ի մատակարարների/կապալառուների և երրորդ կողմի աշխատանքներ (ծառայություններ մատուցողի) կատարողի ներգրավման քաղաքականության պահանջների: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ **Տնտեսական հնարավորություններ, Տեխնիկական փորձ, Սարքավորումներ, Անձնակազմ, Որակավորում, Նույնանման պայմանագրերի իրականացման փորձ:** Ընտրված մասնակիցը որոշվում է սահմանված պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր: Պայմանագրի համար վճարումը կիրականացվի Կատարողին առաջարկվող պայմանագրի նախագծում սահմանված կարգով: Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն մրցույթի հայտերի (տեխնիկական և տնտեսական առաջարկ) բացման նիստը: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը: Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը: Մրցույթի առաջարկները (տեխնիկական, տնտեսական) անհրաժեշտ է ներկայացնել քաղաք Գորիս Գր. Տաթեւացու 2 հասցեով, փաստաթղթային ձեւով **մինչեւ 2018թ. Սեպտեմբերի 14-ը, ժամը 10:00,** եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն: Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց եւ հաստատելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ուղարկում է հրավեր գնային առաջարկները ներկայացնելու համար: Հայտերի (տեխնիկական, տնտեսական առաջարկների) բացումը տեղի կունենա քաղաք Գորիս Գր. Տաթեւացու 2 հասցեում, **2018թ. Սեպտեմբերի 14-ին**

CONTOURGLOBAL®

Հիդրո կասկադ

ժամը 10:00-ին: Մասնակիցների **Տնտեսական հնարավորությունների, Տեխնիկական փորձի, Սարքավորումների, Անձնակազմի, Որակավորման, Նույնանման պայմանագրերի իրականացման փորձի** վերաբերյալ պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները հայտով (տեխնիկական, տնտեսական առաջարկ) պետք է պատվիրատուին ներկայացնեն սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:
Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների գծով մասնագետ Ա. Նիկոլայանին:
Հեռախոս՝ 0284 50022
Էլ. փոստ arevik.nikolayan@contourglobal.com

Պատվիրատու՝ «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ

Հայտարարությունը կհրապարակվի tender.am կայքում

<Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ

ՀՐԱՎԵՐ

<<Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ>> ՓԲԸ-ի կարիքների համար Գրասենյակային կահույքի ձեռքբերման հայտարարված մրցույթի

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն <<Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ>> ՓԲԸ-ի, (այսուհետև՝ Պատվիրատու)՝ կարիքների համար՝ Գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով 218/18 եզակի հղման համարով անցկացվող մրցույթի ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի Գնումների ուղեցույցի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

<Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի գնումների բաժնի պատասխանատու անձի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ arevik.nikolayan@contourglobal.com

ՄԱՍ Ի.

1. Գնման առարկայի բնութագիրը

2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը

3. Հայտը ներկայացնելու կարգը

4. Հայտերի/առաջարկների բացումը և գնահատման կարգը

5. Պայմանագրի կնքումը

6. Ընթացակարգը չկայացած հայտարարելը

ՄԱՍ I

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում <Քոնթուրզլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի կարիքների համար՝ Գրասենյակային կահույքի ձեռքբերումը:

Չափաբաժի ների համարը	*Ապրանքի անվանումը*	*Չափի միավոր*	*Քանակ*
1	Հանդերձապահարան/ Գրապահարան/ /մեկ կողմը փակ դռներով/ Wardrobe /Bookshelf/ with closing doors from one side/	հատ/pc	12
2	Գրապահարան /փոքր/ Bookshelf /small/	հատ/pc	1
3	Գրապահարան/մեծ/ Bookshelf /large/	հատ/pcs	2
4	Սեղան /մեծ/ Table /big/	հատ/pc	6
5	Սեղան /փոքր/ Tables /small/	հատ/pcs	29
6	Սեղան գծագրային Drawing Desk	հատ/pc	1
7	Սեղան համակարգչի Computer desk	հատ/pcs	1
8	Հանդերձապահարան Wardrobe	հատ/pc	1
9	Իրերի պահարան /մեծ/	հատ/pcs	1

	Closet shelf /large/		
10	Պահարան /փոքր/ Shelf /small/	հատ/pc	1
11	Տումբա /փոքր/ Stand /small/	հատ/pc	1
12	Գրասեղան Desk	հատ/pcs	1
13	Դարակաշար Racking	հատ/pc	1
14	Անկյունային բազմոց Angular sofa	հատ/pcs	1
15	Կլոր սեղան Round table	հատ/pc	1

Գրասենյակային կահույքի ձեռքբերման տեխնիկական բնութագրերը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի ՄԱՍ 2:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված ցուցակներում ներառվել է հայտը ներկայացնելու օրվանից հետո, ապա նրա տվյալ հայտը ենթակա չէ մերժման:

2.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված գրավոր հայտարարություն:

2.3 Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին,

բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին տնօրինող մասնակից.

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ.

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տաս և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

2.4 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) ֆինանսական միջոցներ,

3) աշխատանքային ռեսուրսներ:

4) տեխնիկական միջոցներ,

1.1 <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նմանատիպ են համարվում գրասենյակային կահույքի մատակարարումը: Կից ներկայացված վերջին երեք տարվա ընթացքում մատակարարված ապրանքների քանակը գումարային արտահայտությամբ պետք է լինի ոչ պակաս քան 4 000 000 /չորս միլիոն/ ՀՀ դրամը, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է լինի ոչ պակաս քան 1,0/ մեկ/ միլիոն ՀՀ դրամը:

Կից ներկայացնել համապատասխան փաստաթղթերի պատճենները (պայմանագիր, հանձման և ընդունման ակտ, հաշիվ-ապրանքագիր): Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

2.2 «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին:

3.3 «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին:

4.4 «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն և հիմնավորումներ կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին՝ կցելով այն հավաստող փաստաթղթերը:

3. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում:

Հայտը/տեխնիկական առաջարկը/ ներկայացվում է փաստաթղթային ձևով: Փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը /տեղեկությունները/, կազմվում են բնօրինակից/ ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և **2** օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են **<<**բնօրինակ**>>** և **<<**պատճեն**>>** բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3.2 Սույն հրահանգի **3.1** կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) Մրցութային ընթացակարգի ծածկագիրը.

գ) **<<**չբացել մինչև հայտերի բացման նիստը**>>** բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը

3.3 Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է:

3.4 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

3) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

4) իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

5) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

6) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

4. ՀԱՅՏԵՐԻ/ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ **2018**թ սեպտեմբերի 14-ը, ժամը՝**<<10:00>>**-ին, ք. Գորիս Գր. Տաթևացու **2** հասցեում:

4.2. Առաջարկի ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո հանձնաժողովը հավաքվում և բացում է բոլոր ներկայացված առաջարկները: Առաջարկները ներկայացրած ընկերությունների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի կողմից առաջարկները բացելու պահին Հանձնաժողովը ուսումնասիրում և գնահատում է ներկայացված տեխնիկական առաջարկները, որից հետո հաստատում կամ մերժում է դրանց համապատասխանությունը տեխնիկական պահանջներին, ներառյալ առաքման ժամը և երաշխիքային պայմանները: Այն պարագայում, եթե ներկայացված փաստաթղթերի հիման վրա հնարավոր չէ որոշել առաջարկի համապատասխանությունը, գնումների բաժինը թեկնածուին խնդրում

է ներկայացնել հավելյալ մանրամասներ և ապացույցներ:

Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց և հաստատելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ծանուցում է տնտեսական առաջարկների բանակցման գործընթացում ներկայացնելու գնային առաջարկներ՝ էլեկտրոնային եղանակով: Համակարգը կառավարող կամ գործընթացի դիտորդ հանդիսացող անձը կարող է տեսնել առաջարկված գները միայն առաջարկների ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո: Առաջարկների ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո դրանք դասակարգվում են ըստ գնի: Գնային առաջարկների բանակցությունների երկրորդ փուլը կարող է մեկնարկել բոլոր մասնակիցներին պատշաճ կերպով տեղեկացնելուց և նրանցից երկրորդ փուլում մասնակցելու վերաբերյալ գրավոր հաստատում ստանալուց հետո: Այս փուլում Առաջին փուլի (Սկզբնական առաջարկ) ամենացածր առաջարկված գինը հայտարարվում է բոլոր մասնակիցներին՝ առանց տրամադրելու որևէ տեղեկություն այդ գինն առաջարկած մասնակցի մասին: Մասնակիցները կարող են առաջարկել ներկայացված գնից ավելի ցածր գին նախօրոք սահմանված ժամկետներում: Առավել ցածր ողջամիտ գին առաջարկած մասնակիցը հանձնաժողովի որոշմամբ ճանաչվում է ընտրված մասնակից/ հաղթող: **5** օրվա ընթացքում մրցույթի բոլոր մասնակիցները պաշտոնապես տեղեկացվում են առաջարկների դասակարգման և Մատակարարի ընտրության մասին: Պայմանագիրը ուղարկվում է ընտրված Մատակարարին ստորագրման համար:

Մրցույթին վերաբերող ամբողջ տեղեկատվությունն ու փաստաթղթերը արխիվացվում են և կցվում են Գնման պատվերին/Պայմանագրին:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

5.1 Նախքան պայմանագիր կնքելը առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հաստատում է, որ սեփական բիզնեսը և ներքին հարաբերությունները կազմակերպելու ժամանակ՝ Պատվիրատուն և Կապալառուն առաջնորդվում են Պատվիրատուի Հակակոռուպցիոն քաղաքականություն (հավելված 5), Մատակարարի վարվեցողության կանոնագիրք (հավելված 6) և Վաճառողի հավաստագրում – պատժամիջոցների մասին օրենսդրության պահանջներ (Հավելված 7) քաղաքականություններին: Վերոնշյալ արձանագրությունները կազմում են պայմանագրի անբաժանելի մաս և կցվում են:

5.2 <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի Ընտրված մասնակցի հետ կնքվում է Պայմանագիր <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի Գնումների ուղեցույցի համապատասխան, ընտրված մասնակցին մրցույթի արձանագրության ծանուցումից 20 (քսան) օրացույցային օրվա ընթացքում:

6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

6.1 Գնահատող հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ ապրանքների մատակարարման պայմանագիր ----------2018	CONTOURGLOBAL HYDRO CASCADE CJSC CONTRACT FOR SUPPLY OF GOODS ----------2018
Սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) կնքվել է ք. ---ում, ----------ին հետևյալ կողմերի միջև՝	This Contract (hereinafter referred to as the "Contract") is executed in ------, on ----------by and between:
1. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ, գրանցված Երևան քաղաքում, Մելիք-Ադամյան 2/2 հասցեում, ՀՎՀՀ՝ 02619957, ի դեմս տնօրեն Արա Հովսեփյանի (այսուհետ՝ Գնորդ) և	1. "CONTOURGLOBAL HYDRO CASCADE" CJSC, having its seat and registered office at Yerevan city, 2/2 Melik Adamyan St., registered under TIN: 02619957, represented by Ara Hovsepyan, in his capacity of Director, hereinafter referred to as Buyer,and
2. "-------" - , գրանցված Երևան քաղաքում, ----- հասցեում, ՀՎՀՀ՝ --------, ի դեմս տնօրեն ---------- (այսուհետ՝ Մատակարար) հետևյալի մասին.	2. " ", having its seat and registered office at str., , registered under, represented by ------ in her capacity of Director, hereinafter referred to as Supplier for the following:
Սահմանումներ.	Definitions
Սույն Պայմանագրի շրջանակներում հետյալ հասկացություններն ու արտահայտությունները ունեն հետևյալ նշանակությունը.	In this Contract, the following words and phrases shall have the following meanings:
Բանկային օր՝ այն օրը (բացառությամբ կիրակի, շաբաթ և պաշտոնական տոն օրերի), երբ Հայաստանում բանկերը աշխատում են սովորական բանկային գործարքներ իրականացնելու համար:	Business Day- a day (other than a Saturday or a Sunday or official holiday) on which banks are generally open for the conduct of normal banking business in Armenia;
Ապրանք՝ սույն պայմանագրի շրջանակներում մատակարարվող ----- համաձայն առաջարկի և տեխնիկական բնութագրի, որոնք կցված են սույն Պայմանագրին որպես հավելվածներ (Հավելված 2 և 3):	Goods----- to be delivered under this Contract as per offer and technical specification attached to this Contract as appendixes (Appendix 2 and 3);
Երաշխիքային ժամկետ	Warranty Period- the period of time during which in case Deficiencies arise in regard with the Goods

CONTOURGLOBAL Հիդրո կասկադ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ TECHNICAL SPECIFICATION	
	Document no. *Փաստաթղթի N*	*Sheet* *էջ*

Նախագիծ Project	***2018թ-ին ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ (ՔԳՀԿ) ընկերության համար կահույքի ձեռքբերում:*** ***Purchase of furniture for ContourGlobal Hydro Cascade (CGHC) for 2018.***	*Security Index*

Անվանում՝

2018թ-ին ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ (ՔԳՀԿ) ընկերության համար կահույքի ձեռքբերում:

Purchase of furniture for ContourGlobal Hydro Cascade (CGHC) for 2018.

Name:

Համակարգ *System*	*Փաստաթղթի տեսակ* *Document Type*	*Կարգ* *Discipline*	*Ֆայլ* *File*

Վերանայում REV	*Վերանայման նպատակ / Description of Revisions*
0	Մրցույթի համար FOR TENDER (TR)

0	15.07.2018	TR Մրցույթ	Գ. Ղազարյան G. Ghazaryan	Ն.Զալյան N.Zalyan	Ա.Յոլյան A.Yolyan
Վերանայում REV	Ամսաթիվ Date	Ծավալ Scope	Պատրաստել է Prepared by	Ստուգել է Checked	Հաստատել է Approved

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ
TECHNICAL TASK AND CONDITIONS

1. **Ընկերության տեղակայման ընդհանուր պայմանները և առանձնահատկությունները**
   General Conditions and characteristics of the company location:

ՔոնթուրԳլոբալ հիդրո կասկադը բաղկացած է Հայաստանի հարավ արևելքում գտնվող Որոտան գետի վրա տեղակայված 3 հիդրոկայաններից և 5 ջրամբարներից: ՔԳ հիդրո կասկադի ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է 404 ՄՎտ: Կասկադի հիմնական տվյալները ներկայացված են ստորև: Բացի հիդրո կայաններից, ընկերությունում գործում են Երևանի և Գորիսի գրասենյակները: Գորիսի գրասենյակը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի, Գորիս քաղաքի Գրիգոր Տաթևացի 2 հասցեում:

ContourGlobal Hydro Cascade consists of 3 HPP's and 5 water reservoirs situated on the Vorotan River in the southeastern part of Armenia. The total installed capacity of the CG Hydro Cascade is 404 MWT. The key data of the cascade's power stations are given below. Besides power plants, there are two offices of the company: in Yerevan and Goris. Goris office is located at the address Grigor Tatevatsi street 2, Goris, Syunik Region, republic of Armenia.

2. **Մատակարարման առարկան/ Subject of the supply**

Մատակարարման առարկա է հանդիսանում ՔԳ Գորիսի գրասենյակի համար ձեռքբերվելիք կահույքը:	The scope of the supply is the furniture to be purchased for Goris Office of CG.
Հանդերձապահարան/ Գրապահարան/ /մեկ կողմը փակ դռներով/ 1. Չափսը - 1350 * 2000 * 450- ձախ/աջ վերին մասում երկու ապակե դուռ: Ձախ/աջ ստորին մասում երկու լամինատե դուռ: Ձախ/աջ մասում պահարան հատկացված զգեստի համար 2. Նյութը՝ լամինատ, եզրերը պատված նույն լամինատե տեքստուրային գույնով: 3. Ապակին ամրացված MDF-ից պրոֆիլով 4. Ապակին բաց շագանակագույն՝ 4մմ հաստությամբ: 5. Բոլոր տեսակի աքսեսուարները համաձայնեցնել պատվիրատուի հետ:	**Wardrobe /Bookshelf/ with closing doors from one side/** 1. Dimensions- 1350 * 2000 * 450- two glass doors on the left / right upper part. Left / Right bottom door with two laminated doors. On the left / right side, space for wardrobe/hanging clothes/. 2. The material is laminate, the edges are covered with the same laminate texture. 3. Glass should be mounted with MDF profile. 4. Colour of the glass light brown, 4 mm thick. 5. All kinds of accessory to be agreed with the Contracting Authority.
Գրապահարան /փոքր/ 1. Գրապահարան 4 դուռ, վերին մասում 2 ապակե, ստո մասում 2 լամինատե դուռ: Ընդհանուր չափը 900*2000 2. Նյութը – լամինատ, հաստությունը՝ 18մմ 3. Լամինատի գույնը՝ համաձայնեցնել պատվիրատուի	**Bookshelf /small/** 1. Bookshelf with 4 doors, 2 glass windows in the upper part, 2 laminate doors in the lower part. The total size is 900 * 2000 * 450. 2. Material – laminate with thickness of 18 mm. 3. Color of the laminate, to agree with the customer.

4. Լամինատի կողային մասերը երիզներով, նույն լամինատե տեքստուրայով և գույնով: 5. Ապակին ամրացված MDF-ից պրոֆիլով: 6. Ապակին բաց շագանակագույն 4մմ հաստությամբ: 7. Բոլոր տեսակի աքսեսուարները համաձայնեցնել պատվիրատուի հետ:	4. The sides of the laminate are edged with the same laminate texture and color. 5. Glass to be mounted with MDF profile. 6. Colour of the glass light brown, 4 mm thick. 7. All kinds of accessories to be agreed with the Contracting Authority.
Գրապահարան/մեծ/ 1. Գրապահարան 6 դուռ 1350*2000*450 2. Վերին մասում ապակե երեք դուռ: 3. Ստորին մասում լամինատե 18մմ հաստությամբ երեք դուռ: 4. Նյութը – լամինատ, հաստությունը՝ 18մմ 5. Լամինատի գույնը՝ համաձայնեցնել պատվիրատուի հետ: 6. Լամինատի կողային մասերին փակցնել երիզներ, նույն լամինատե տեքստուրայով և գույնով: 7. Ապակին ամրացված MDF-ից պրոֆիլով: 8. Ապակին բաց շագանակագույն 4մմ հաստությամբ: 9. Ստորին մասը բաժանված լամինատից դարակներով 18մմ հաստությամբ: 10. Բոլոր տեսակի աքսեսուարները համաձայնեցնել պատվիրատուի հետ:	**Bookshelf /large/** 1. Bookshelf with 6 doors, 1350 * 2000 * 450 2. With three glass doors on the top of the shelf. 3. Three laminate doors on the bottom with thickness of 18 mm. 4. Material - laminate, thickness of 18 mm 5. Color of the laminate, to agree with the Contracting Authority. 6. Edges of the laminate to be attached to the lateral parts with the same laminate texture and color. 7. Glass to be mounted with MDF profile. 8. Colour of the glass light brown, 4 mm thick. 9. The bottom part to be divided by laminate shelves, thickness of the laminate 18 mm. 10. All kinds of accessories to be agreed with the Contracting Authority.
Սեղան /մեծ/ 1. Գրասեղան, կողային դարակներով 1700*560*500 Ընդհանուր չափսը 1900*900*770 2. Լամինատից 18մմ հաստությամբ: 3. Սեղանի աշխատանքային երեսը պրոֆիլից MDF: 4. Աջ/ձախ կողմից սահող դռներ, ներսում լամինատից դարակներ 5. Տումբա դարակներով 700*400*450 6. Տումբա, բարձր որակի հոլովակներով, քաշովի դարակների համար նախատեսել սահող սողնակներ, բարձրորակ գնդիկավոր մեխանիզմով: 7. Մալուխների անցատարի անցքերի մեջ պլաստիկ դետալով: 8. Բոլոր տեսակի աքսեսուարները համաձայնեցնել պատվիրատուի հետ:	**Table /big/** 1. Office desk with side shelves 1700 * 560 * 500 Total size 1900 * 900 * 770 2. Material - 18 mm thick laminate. 3. Top side of the desk from profile MDF. 4. Sliding doors on the right / left, laminated shelves from inside. 5. Side stand with shelves 700 * 400 * 450 6. Side stand, with high quality roller bearings, sliding racks for drawers, with high-quality ball valve mechanism. 7. Cable passage holes to have plactic details. 8. All kinds of accessories to be agreed with the Contracting Authority.
Սեղան /փոքր/ 1. Գրասեղան, կողային դարակներով 1500*700*750 Կողային դարակը 1500*450*560 2. Նյութը – լամինատ, հաստությունը՝ 18մմ: 3. Սեղանի աշխատանքային երեսի եզրերը MDF—ից պրոֆիլով:	**Tables /small/** 1. Office desk with side shelves 1500 * 700 * 750 Side bar 1500 * 450 * 560 2. Material - 18 mm thick laminate. 3. Surface edges of the desk from profile MDF. 4. Pull-out drawers from right/left side and a space for PC processor from left / right side.

4. Աջ/ձախ կողմից քաշովի դարակներով և ձախ/աջ մասում համակարգչի համար նախատեսված տեղով: 5. Քաշովի դարակները սահող սողնակներով-բարձրորակ գնդիկավոր մեխանիզմով: 6. Մալուխների անցատար, մալուխների անցքերի մեջ պլաստիկե դետալով 7. Բոլոր տեսակի աքսեսուարները համաձայնեցնել պատվիրատուի հետ	5. Pull-out drawers to have sliding fasteners - with high quality ball valve mechanism. 6. Cable passage holes to have plactic details. 7. All kinds of accessories to be agreed with the Contracting Authority.
Սեղան գծագրային 1. Ներքևի մասում դարակ 2. Լամինատի գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ, հաստությունը՝ 18մմ: 3. Սեղանի աշխատանքային երեսի եզրերը պրոֆիլով MDF-ից: 4. Սեղանի ոտքերը հաստացրած 4սմ MDF-ից փայլուն ճիպոտով:	**Drawing Desk** 1. At the bottom of the rack 2. Colour of the laminate to be agreed with the Contracting Authority, thickness 18 mm. 3. Edges of the desk working surface with MDF profiles. 4. The table legs with thicker 4 cm MDF with shiny bars.
Սեղան համակարգչի 1. Սեղան նախատեսված համակարգչի համար 1200*750*550 2. Նյութը –լամինատ, 3. Սեղանի երեսի եզրերը MDF—ից պրոֆիլ: 4. Սեղանի աջ մասում նախատեսված դարակ պրոցեսորի համար: 5. Սեղանի դիմացի մասը ծածկված ընդհանուր լամինատով: 6. Մալուխների անցատարով և անցատարի մեջ պլաստիկ դետալով:	**Computer desk** 1. Computer desk - 1200 * 750 * 550 2. Material - laminate 3. Edges of the desk surface from MDF profiles. 4. Space for CPU on the right side of the table. 5. The front part of the table to be covered with laminate. 6. Cables passage with plastic details.
Հանդերձապահարան 1. Հանդերձապահարան, 2250 * 2000 * 550 2. Նյութը՝ 18մմ հաստությամբ լամինատից 3. Ձախ/աջ մասում երեք դուռ վերևի մասում ապակե դռներ, դռները փակցված լինեն MDF-ից պրոֆիլով, ապակու գույնը դարչնագույն 4. Ներքևի մասում երեք դուռ, փակ, ներսում դարակ բաժանված երկու մասի 5. Պահարանի ներսում հատկացված շորեր կախելու հարմարանքով 6. Մնացած աքսեսուարները համաձայնեցնել Պատվիրատուի հետ	**Wardrobe** 1. Shelf for hanging clothes - 2250 * 2000 * 550 2. Material: 18 mm thick laminate 3. 3 doors on the left / right side, doors made of MDF profiles, glass color to be brown. 4. At the bottom with 3 locking doors, drawers/shelves divided into 2 parts from inside. 5. Possibility for hanging clothes inside the wardrobe. 6. The rest of the accessories to be agreed with the Contracting Authority
Իրերի պահարան /մեծ/ 1. Իրերի պահարան անկյունային 1500*1800*1900	**Closet shelf /large/** 1. Angular shelf 1500 * 1800 * 1900

2. Նյութը – լամինատ: Եզրերը պատված նույն լամինատ տեքստուրային գույնով: 3. Դռները լամինատից, եզրերը PVC-ով 4. Ներսում դարակաշարեր: 6. Ձախ մասում նախատեսված զգեստ կախելու հարմարանքով:	2. Material - laminate. Edges to be covered with the same laminate texture. 3. Doors from laminate, edges with PVC. 4. Inside with racks. 6. With a space for hanging clothes on one side.
Պահարան /փոքր/ 1. Նյութը՝ լամինատից , 2 դուռ 2. Հանդերձապահարանի ներսում նախատեսված շորե կախիչով և վերևի մասում դարակ: 3. Դռան ներսում ամրացված հայելի:	**Shelf /small/** 1. Material - laminate, shelf with 2 doors 2. Space for hanging clothes inside and with a rack on the top. 3. Mirror attached inside the door.
Տումբա /փոքր/ 1. Նյութը –լամինատ, 2. Չափսերը 900 * 500 * 750 3. Սեղանի երեսի եզրերը ամրակցված PVC-ով 4. Ներսում դարակ բաժանված երկու մասի	**Stand /small/** 1. Material - laminate 2. Dimensions 900 * 500 * 750 3. The edges of the table surface to be fixed with PVC 4. With a space for hanging clothes divided into 2 parts.
Գրասեղան 1. Գրասեղան, կողային դարակներով 1400*700*750 2. Նյութը –լամինատ, հաստությունը՝ 18մմ: 3. Սեղանի երեսի եզրերին փակցնել սպիտակ փայլուն MDF—ից պրոֆիլ: 4. Սեղանի աջ մասում տումբ՝ վերևի մասում քաշովի դարակ, ներքևի մասում դուռ բաժանված դարակով երկու մասից: 5. Սողնակները լինեն բարձր որակի 6. Սեղանի դիմացի մասը ծածկված լամինատից 18մմ հաստությամբ: 7. Մալուխների համար նախատեսված անցքով:	**Desk** 1. Office desk with side drawers 1400 * 700 * 750 2. Material - laminate, thickness - 18 mm. 3. Eedges of the table surface to be with attached white shiny MDF profile. 4. With a stand on the right side of the desk with pulling drawers on the upper part, and a door on the bottom, with a shelf divided into 2 parts. 5. Sliding racks to be of high quality 6. The front of the table to be covered with laminate of thickness of 18 mm. 7. With foreseen cable holes.
Դարակաշար 1. Նյութը –լամինատ: 2. Չափսերը 2000 * 1350 * 450 3. Լամինատի եզրերը իրա տեքստուրային գույնով փակված 4. Ներքևում երեք փակվող դուռ, ներսում դարակ բաժանված երկու մասի: 5. Վերևի հատվածը բաց դարակաշարով, հետևի մասը ծածկված ДВП-ով:	**Racking** 1. Material - laminate. 2. Dimensions 2000 * 1350 * 450 3. The edges of the laminate to be covered with the same texture color 4. Three locking doors on the bottom, racks divided into two parts from inside. 5. The upper part to be covered with an open rack and the rear part to be covered with hardboard.

6.Բոլոր տեսակի աքսեսուարները և գույնը համաձայնեցնել Պատվիրատուի հետ	6□All types of accessories and colour to be agreed with the Contracting Authority.
Անկյունային բազմոց 1. Չափսը 3,30 x 4,80: 2. Նստատեղը փափուկ կտորից և սպունգից, կամ բարձր որակի նստատեղի լցոնից: 3. Ոտքերը բարձր որակի նիկելից կամ խրոմից: 4. Ձևը, գույնը և այլն համաձայնեցվի Պատվիրատուի հետ:	**Angular sofa** 1. The size is 3,30 x 4,80. 2. The seat is soft fabric and sponge or high quality inside material for the seat. 3. Legs with high quality nickel or chromium. 4. Form, color, etc. to be agreed with the Contracting Authority.
Կլոր սեղան 1. Տրամագիծը 2մ: 2. Կազմված 2 մասից /կիսվող/: 3. Ոտքերը բարձր որակի նիկելից կամ խրոմից: 4. Գույնը և այլն համաձայնեցվի պատվիրատուի հետ:	**Round table** 1. Diameter of 2 m. 2. Composed of 2 parts /divided/. 3. Legs with high quality nickel or chromium. 4. Color and other accessories to be agreed with the Contracting Authority..

1. Աշխատանքների մանրամասն նկարագրությունը Մատակարար ընկերությունը (այսուհետ Կապալառու) պետք է Պատվիրատուի ներկայացրած հայտի հիման վրա, նշված քանակի, որակի և այլ տեխնիկական պահանջների մատակարարի կահույք: Կապալառուն պետք է նախատեսի այցելություն Գորիս գրասենյակ ըստ անրաժեշտության, իր սեփական միջոցներով:	**1. Detailed description of the scope** The Supplier company (hereinafter referred to as Contractor) shall supply chairs in accordance with the number, quality and other technical requirements submitted, based on the order made by the Contracting Authority. The contractor must visit Goris office as per necessity, by his own means.
2. Երաշխիքային սպասարկում Կապալառուն պետք է ապահովի 2 տարվա երաշխիք:	**2. Warranty service** The Contractor shall provide warranty for 2 years.
3. <u>Աշխատաժամանակ</u> Աշխատանքներից առաջ կապալառուն պետք է ներկայացնի իր աշխատանքների մանրակրկիտ ժամանակացույցը: Պատվիրատուի նորմալ աշխատանքային օրը՝ ժ. 9:00-17:45-ը: Ոչ աշխատանքային օրերին և ժամերին աշխատանքը թույլ է տրվում միայն Պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո:	**3. <u>Working time</u>** Before the start of the work the Client should present its detailed working schedule. Normal working day for the contracting authority is 9:00am to 17:45pm. Work is permitted during non-working hours only by consent of the Contracting Authority.
4. Մատակարարման ժամկետը Մատակարարման ժամկետը պայմանագրի ստորագրման պահից 40 օրվա ընթացքում:	**4. Service deadline** The deadline for supply of blinds and installation is 40 days after the conclusion of the contract.

Ներկայացված նմուշները ընդամենը օրինակներ են և չեն հանդիսանում կոնկրետ պատվեր: Մատակարարը մրցույթի տեխնիկական փուլում պետք է ներկայացնի օգտագործվող նյութերը և պատվիրատուի հաստատումից հետո միայն կատարի պատվերը: Բոլոր տեսակի աքսեսուարները, կահույքի գույնը, որակն ու դիզայնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարումը՝ ըստ պատվիրող ընկերության կողմից ներկայացվող հայտի:

Below presented are only samples and not the precise order. The Supplier should provide samples of the type of material to be used at the technical stage of the tender. All types of accessories, colour of the furniture, quality and design to be agreed with the Contracting Authority. Delivered according to the order submitted by the Contracting Authority (ordering company).





CONTOURGLOBAL	Նախահաշիվ *Bill of Quantity*				
	Document no. *Փաստաթղթի N*	Sheet / էջ			

Project Նախագիծ	*2018թ-ին ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ (ՔԳՀԿ) ընկերության համար կահույքի ձեռքբերում:* *Purchase of furniture for ContourGlobal Hydro Cascade (CGHC) for 2018.*	Անվտանգության ինդեքս Security Index
Title Անվանում	*2018թ-ին ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ (ՔԳՀԿ) ընկերության համար կահույքի ձեռքբերում:* *Purchase of furniture for ContourGlobal Hydro Cascade (CGHC) for 2018.*	

00	30.05.2018	TR	Գ. Ղազարյան G. Ghazaryan	Ն.Զալյան N.Zalyan	Ա.Յոլյան A.Yolyan
REV Վերանայում	Date Ամսաթիվ	Scope Ծավալ	Prepared Նախապատրաստել է	Checked Ստուգել է	Approved Հաստատել է

1. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՎԱԼԸ — SCOPE OF THE SUPPLY

Սույն տեխնիկական բնութագրի առարկա հանդիսացող գրասենյակային կահույքի ծավալն է՝	The scope of the supplies office furniture subject of this BoQ is the following:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ — SUBJECT OF THE SUPPLY

N	Անվանումներ Items	*Չափի միավորը* *Measure unit*	Քանակը Quantity
1.	Հանդերձապահարան/ Գրապահարան/ /մեկ կողմը փակ դռներով/ Wardrobe /Bookshelf/ with closing doors from one side/	հատ/pc	12
2.	Գրապահարան /փոքր/ Bookshelf /small/	հատ/pc	1
3.	Գրապահարան/մեծ/ Bookshelf /large/	հատ/pcs	2
4.	Սեղան /մեծ/ Table /big/	հատ/pc	6
5.	Սեղան /փոքր/ Tables /small/	հատ/pcs	29
6.	Սեղան գծագրային Drawing Desk	հատ/pc	1
7.	Սեղան համակարգչի Computer desk	հատ/pcs	1
8.	Հանդերձապահարան Wardrobe	հատ/pc	1
9.	Իրերի պահարան /մեծ/ Closet shelf /large/	հատ/pcs	1
10.	Պահարան /փոքր/ Shelf /small/	հատ/pc	1
11.	Տումբա /փոքր/ Stand /small/	հատ/pc	1
12.	Գրասեղան Desk	հատ/pcs	1
13.	Դարակաշար Racking	հատ/pc	1
14.	Անկյունային բազմոց Angular sofa	հատ/pcs	1
15.	Կլոր սեղան Round table	հատ/pc	1